RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

9 ԱՄԻՍՆԵՐ 2022 թ.

Բովանդակություն

- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2022 թ. 9 ամիսների Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթ, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Զուտ շահույթ

- 2022 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում Հայաստանում գործող բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է **188 մլրդ ՀՀ դրամ,** ինչը **121 մլրդ ՀՀ դրամով** կամ **2.8 անգամ** ավել է քան 2020 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում գրանցած արդյունքը:

Բանկերի զուտ շահույթը - 9 ամիս 2022 թ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2022թ. առաջին 9 ամիսների ընթացքում աճել են **660 մլրդ ՀՀ դրամով,** կամ **9.4%**:

- Առ 30.09.2022, ընդհանուր ակտիվները կազմել են **7.706 մլրդ ՀՀ դրամ**:

Բանկերի ընդհանուր ակտիվները - 30.09.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Ինեկոբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **56.1%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ և ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **42.4%:**
- Արդշինբանկ-ի մասնաբաժինը ամենամեծն է՝ **16.5%:**

Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 30.09.22



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2022թ. առաջին 9 ամիսների ընթացքում նվազել է -**0.2%**-ով:
- Առ 30.09.2022 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **3.992 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **52%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:

Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան - 9 ամիս 2022 թ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր վարկային պորտֆել

•- Ամենախոշոր **5** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ եւ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **60.8%:**

•- Ամենախոշոր **3** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ եւ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **44%:**

•- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **17.7%:**

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 30.09.22



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2022թ. 9 ամիսների ընթացքում աճել են **382 մլրդ ՀՀ դրամով,** կամ **6.2%:**

- Առ 30.09.2022, ընդհանուր պարտավորությունները կազմել են **6.501 մլրդ ՀՀ:**



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2022թ. 9 ամիսների ընթացքում աճել են **465 մլրդ ՀՀ դրամով,** կամ **12%**:
- Առ 30.09.2022, **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **4.339 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **67%:**

Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ
- 30.09.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը նվազել է 2022թ. 9 ամիսների ընթացքում **80.5 մլրդ ՀՀ դրամով,** կամ **18**%-ով: Հնարավոր նվազման պատճառներից մեկը կարող է հանդիսանալ այն փաստը, որ 2022թ ՀՀ ԿԲ փոփոխել է պարտատոմսերի պահուստավորման նորմատիվը, որը ժամանակին խթան էր հանդիսացել բանկերի կողմից պարտատոմսեր թողարկումների մասով:
- **17** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **12**-ը:

Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 30.09.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- 2022թ. 9 ամիսների ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **278 մլրդ ՀՀ դրամով**, կամ **30%** ու կազմել **1.205 մլրդ ՀՀ դրամ**:
- Կանոնադրական կապիտալը (ներառյալ էմիսիոն եկամուտը) աճել է **136 մլրդ ՀՀ դրամով**: Նշված աճը հիմնականում պայմանավորված ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ի կանոնադրական կապիտալի աճով, որը ավելացել է շուրջ 128 մլրդ ՀՀ դրամ-ով: Բանկի նոր բաժնետերերն են ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ ՍՊԸ-ը (75% բաժնեմաս) եւ <<Բնակարան երիտասարդներին>> վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն ՓԲԸ-ը (25% բաժնեմաս):
- Վերագնահատման պահուստները նվազել են **26 մլրդ ՀՀ դրամով**, և կազմել են ընդամենը **0.7 մլրդ ՀՀ դրամ**:



Ընդհանուր կապիտալ

- Առ 30.09.2022թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **58%**-ը և հավասար է **699 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 30.09.2022թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **42%**-ը և հավասար է **505 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 30.09.2022թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **0.06%**-ը և հավասար են **0.7 մլրդ ՀՀ դրամ**:

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 30.09.2022



Կուտակված շահույթ (վնաս)

- 2022թ. 9 ամիսների ընթացքում Հայաստանի բանկային համակարգի կուտակված շահույթը/վնասը (ներառյալ գլխավոր պահուստը) աճել է **168 մլրդ ՀՀ դրամով**, կամ **50.1%,** կազմելով **505 մլրդ ՀՀ դրամ**:
- Շահաբաժին (դիվիդենտ) հայտարարագրել են **7** բանկ՝ընդհանուր գումարով **15.5 մլն ՀՀ դրամ** (Ինեկոբանկ – *6 մլրդ ՀՀ դրամ*, ԱԿԲԱ Բանկ – *3.3 մլրդ ՀՀ դրամ, ԱրարատԲանկ – 3.0 մլրդ ՀՀ դրամ,* ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ – *1.15 մլրդ ՀՀ դրամ* և Արդշինբանկ – *1.11 մլրդ ՀՀ դրամ, Կոնվերս Բանկ – 0.51 մլրդ ՀՀ դրամ, Յունիբանկ – 0.46 մլրդ ՀՀ դրամ*):

Կուտակված շահույթ (վնաս), ներ. գլխավոր պահուստ - *30.09.22 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)*



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am